

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2013թ.

N -Ն

### ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 558-Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 75-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 7-ի N 142-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 892-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 996-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 271-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1025-Ա և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն և դեկտեմբերի 27-ի N 1658-Ն որոշումների մեջ փոփոխություններ և վերաբաշխում կատարելու մասին» N 1050-Ն որոշումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 37 արձանագրային որոշման 27-րդ կետը՝

## **Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

**1.** Երևան քաղաքի ավագանու **2012** թվականի դեկտեմբերի **25**-ի «Երևան քաղաքի **2013** թվականի բյուջեի մասին» N **558**-Ն որոշմամբ հաստատված.

- 1)** Եկամուտների գումարը նվազեցնել **1,302,466.5** հազար դրամով,
- 2)** Ծախսերի գումարը նվազեցնել **1,302,466.5** հազար դրամով:

**2.** Երևան քաղաքի ավագանու **2012** թվականի դեկտեմբերի **25**-ի «Երևան քաղաքի **2013** թվականի բյուջեի մասին» N **558**-Ն որոշմամբ հաստատված NN **1, 2, 3, 6** և **7** հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN **1-5** հավելվածների:

**3.** Երևան քաղաքի ավագանու **2012** թվականի դեկտեմբերի **25**-ի «Երևան քաղաքի **2013** թվականի բյուջեի մասին» N **558**-Ն որոշման **2**-րդ կետի **2**-րդ ենթակետի «**700,000.0** հազար դրամ» բառերը փոխարինել «**245,000.0** հազար դրամ» բառերով:

**4.** Երևան քաղաքի Արշակունյաց **28** հասցեում գտնվող «Ռիմ Գարուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հասարակական նշանակության օբյեկտի քանդման և սեփականության իրավունքի դադարեցման դիմաց փոխհատուցում տրամադրելու համար Երևան քաղաքի **2013** թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել **20,880.0** հազար դրամ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով:

**5.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 558-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N 558-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է Երևան քաղաքի 2013 թվականի բյուջեում իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 271-Ա որոշմամբ հաստատված Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտայի և Լենինգրադյան փողոցի միջև ավտոճանապարհի կառուցելու ներդրումային ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 271-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1025-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 37 արձանագրային որոշման 27-րդ կետի համաձայն փոփոխություններ են կատարվել Իսակովի պողոտայի և Լենինգրադյան փողոցի միջև ընկած հատվածում ավտոմայրուղու կառուցման ներդրումային ծրագրում, մասնավորապես՝ նախնական հաշվարկների համաձայն ծրագրի գնահատված արժեքը կազմում էր **3,710.0** մլն դրամ: Սահմանված կարգով նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելուց հետո ծրագրի հստակ նախահաշվային արժեքը կազմեց **7,896.0** մլն դրամ, որը ավելի քան երկու անգամ գերազանցում էր նախնական հաշվարկը: Ծրագիրն իրականացնող կազմակերպության հետ տարվեցին բանակցություններ՝ ճշգրտման արդյունքում առաջացած տարբերության մի մասը ակնկալվող շահույթի և այլ ծախսերի հաշվին նվազեցնելու նպատակով, ինչի արդյունքում «Սահակյանշին» ՓԲԸ-ն համաձայնեց **7,896.0** մլն դրամ նախահաշվային արժեքով ծրագիրը իրականացնել **6,409.3** մլն դրամով: Հաշվի առնելով, որ ծրագիրը նախատեսում է կառուցման դիմաց գումարի փոխարեն հողատարածքի տրամադրում, ինչը Երևան քաղաքի բյուջեում արտացոլվում է որպես հողերի օտարումից մուտքեր և կառուցման նպատակով ելքեր, ուստի Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 37 արձանագրային որոշման 27-րդ կետով սահմանված կարգով և չափով հաշվարկվել է հատկացվող հողատարածքների տարբերության արժեքը և արտացոլվել ներկայացված նախագծում՝ ծրագրի արժեքը ավելացնելով **2,699.3** մլն դրամով:

- Հայաստանի Հանրապետության կառավարության **2013** թվականի սեպտեմբերի **19**-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության **2012** թվականի դեկտեմբերի **20**-ի N **1616**-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N **996**-Ն որոշմամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից որպես այլ ընթացիկ դրամաշնորհի հատկացվել է **8,926,893.6** հազար դրամ՝ Երևանի քաղաքապետարանին տրամադրելու համար, որից՝

- **7,485,024.6** հազար դրամը նախատեսված է Երևան քաղաքում ասֆալտբետոնյա ծածկի հիմնանորոգման աշխատանքների կատարման համար, ինչը նախատեսում է Երևան քաղաքում ունենալ շուրջ **1,009,780** քմ նոր, բարձրորակ ասֆալտբետոնյա շերտ երթևեկելի հատվածներում, շուրջ **70,045** քմ ասֆալտբետոնյա շերտ մայրերի հատվածներում, ինչպես նաև շուրջ **38,034** գծմ նոր եզրաքարերի տեղադրում:

- **1,441,869.0** հազար դրամը նախատեսված է Երևան քաղաքում քանդման ենթակա վթարային շենքերի բնակիչների փոխհատուցման նպատակով բնակարանների ձեռք բերման համար, ինչը նախատեսում է վթարային շենքի տեղում կառուցվող նոր բազմաբնակարան շենքից թվով **100** բնակարանների ձեռք բերում:

Նշված ծրագրերը դեռևս ՀՀ **2013** թվականի պետական բյուջեի բյուջետային գործընթացում ձեռք բերված նախնական պայմանավորվածության համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան պատվիրվել էին և դրանց հիմնական մասը փաստացի իրականացվել է: Նշված ծրագրերից Երևան քաղաքի **2013** թվականի բյուջեում արտացոլված էր միայն բնակարանների ձեռք բերման համար նախատեսված գումարները, որը պետք է ճշգրտվեր ՀՀ պետական բյուջեից գումարների հատկացման ժամանակ: Ներկայացված նախագծով նախատեսվում է ճշգրտել վերը նշված գումարի ֆինանսավորման աղբյուրը՝ եկամտային մասում, ինչպես նաև մուտքային և ելքային մասում արտացոլել ասֆալտբետոնյա ծածկի հիմնանորոգման համար ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարները:

- Հայաստանի Հանրապետության կառավարության **2013** թվականի օգոստոսի **1**-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության **2013** թվականի փետրվարի **7**-ի N **142**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N **892**-Ն որոշմամբ սահմանվել են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների տարածքային բաժնի (ՄՕՏԲ) պետի **1** հաստիքի և մասնագետի **1** հաստիքի հաշվով տարեկան նորմատիվները: Նորմատիվների փոփոխություններով պայմանավորված

Երևանի քաղաքի Ավան, Նորք-Մարաշ և Նուբարաշեն վարչական շրջաններում սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման համար նախատեսված գումարը նվազում է ընդհանուր **309.9** հազար դրամով, քանի որ այսուհետ այդ վարչական շրջաններում ՄՕՏԲ-ների էլեկտրաէներգիայի և կոմունալ ծախսերի ֆինանսավորումը կատարվելու է անմիջականորեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ ծրագիրը հանդիսանում է պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորություն, նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի **2013** թվականի բյուջեի վարչական մասի եկամուտները և ծախսերը նվազեցնել **309.9** հազար դրամով:

- Հայաստանի Հանրապետության կառավարության **2013** թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության **2013** թվականի պետական բյուջեում, Հայաստանի Հանրապետության կառավարության **2012** թվականի դեկտեմբերի 20-ի N **1616**-Ն և դեկտեմբերի 27-ի N **1658**-Ն որոշումների մեջ փոփոխություններ և վերաբաշխում կատարելու մասին» N **1050**-Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության **2013** թվականի պետական բյուջեով որպես Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն նախատեսված մի շարք ծրագրերի գծով (հիմնականում վարկային) կատարվել են ծրագրային ցուցանիշների նվազեցում ընդհանուր **9,275,721.5** հազար դրամ գումարի չափով, որոնք համապատասխանաբար արտացոլվել են Հայաստանի Հանրապետության **2014** թվականի պետական բյուջեի նախագծում: Նշված փոփոխությունը սահմանված կարգով պետք է արտացոլվի նաև Երևան քաղաքի **2013** թվականի բյուջեում, ինչի հետ կապված նախագծով նախատեսվել են անհրաժեշտ ճշգրտումները, այդ թվում՝

- **3,748,495.0** հազար դրամը՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման վարկային և դրամաշնորհային ծրագրերից: Փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ Երևանի մետրոպոլիտենի Վերակառուցման երկրորդ ծրագրի II-րդ փուլով նախատեսվող երեք ծրագրերից այս պահի դրությամբ երկուսի կատարումը տեղափոխվում է հաջորդ տարի, քանի որ Եվրոպական Ներդրումային Բանկի և Եվրոմիության Հարևանության Ներդրումային ծրագրի հետ Եվրոպայում տեղի ունեցող բանակցային գործընթացի արդյունքում նախատեսվող գումարները

հասանելի կլինեն միայն Եվրամիության Հարևանության Ներդրումային Գործիքի (ՀՆԳ) դրամաշնորհային համաձայնագրի ստորագրումից հետո, որն ըստ նախնական տվյալների տեղի կունենա **2013** թվականի հոկտեմբեր ամսին: Հաշվի առնելով նաև ստորագրմանը հաջորդող համաձայնագրի վավերացման գործընթացի տևողությունը՝ ծրագրերի գծով ֆինանսավորումը հնարավոր կլինի իրականացնել միայն **2014** թվականին, որն էլ նախատեսվել է ՀՀ **2014** պետական բյուջեի նախագծով:

- **4,388,943.4** հազար դրամը՝ «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)» բյուջետային ծրագրից: Ծրագրի մասնակի տեղափոխումը **2014** թվական պայմանավորված է խորհրդատուի կողմից պայմանագրով սահմանված ժամկետների չկատարմամբ և կանխատեսվող ցուցանիշների ոչ ճիշտ պլանավորմամբ: Բանակցությունների արդյունքում ճշգրտվել և հստակեցվել են աշխատանքների կատարման պայմանագրային ժամկետները:
- **896,923.3** հազար դրամը՝ «Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր (պատվիրակված լիազորություններ)» բյուջետային ծրագրից: Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագրի գծով ցուցանիշների տեղափոխումը պայմանավորված է ֆրանսիական կողմի ընթացակարգերով, ինչի մասին ֆրանսիական կողմը պաշտոնապես տեղեկացրել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը:
- **241,359.8** հազար դրամը՝ «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ)» բյուջետային ծրագրից, ինչի ճշգրտման անհրաժեշտությունը առաջացել է այն պատճառով, որ ՀՀ **2013** թվականի պետական բյուջեում ծրագիրը նախատեսվել է շահառուների կանխատեսվող քանակական թվով, իսկ գումարների փաստացի հատկացումը հաշվարկվել է ՀՀ կառավարության **2012** թվականի դեկտեմբերի **27**-ի «Սոցիալական փաթեթի հատկացման կարգը և փաթեթի մեջ մտնող ծառայությունների բովանդակությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության **2011** թվականի դեկտեմբերի **29**-ի N **1917**-Ն և N **1923**-Ն, ինչպես նաև **2012** թվականի ապրիլի **19**-ի N **594**-Ն որոշումներն ուժը կորցրած

ճանաչելու մասին» N **1691**-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ յուրաքանչյուր շահառուի համար ամբողջական դրույքով:

Նշված փոփոխությունների արդյունքում նախատեսվում է Երևան քաղաքի **2013** թվականի բյուջեի վարչական մասի եկամուտները և ծախսերը պատվիրակված լիազորությունների մասով նվազեցնել **9,275,721.5** հազար դրամով:

- Երևան քաղաքի **2013** թվականի բյուջեի եկամտային մասով ավտոկայանատեղի համար սահմանված տեղական տուրքերի գծով կանխատեսվել էր **1.0** մլրդ դրամի չափով եկամուտներ: Հաշվի առնելով տուրքի կիրառման համար կանխատեսված ժամկետների փոփոխությունը, ինչպես նաև այն, որ ՀՀ **2013** թվականի բյուջեով առաջին անգամ են կանխատեսվել նման մուտքեր, որի հիմքում առկա էին միայն տեսական վերլուծություններ, փաստացի գանձման ցուցանիշից ելնելով կանխատեսվում է մինչև տարեվերջ շուրջ **350.0** մլն դրամի գանձում՝ ինչով պայմանավորված նախագծով առաջարկվում է նշված տուրքի գծով եկամուտների ծրագրված տարեկան ցուցանիշը նվազեցնել **650.0** մլն դրամով՝ համապատասխան փոփոխություններ կատարելով ծախսային մասում:

- Երևան քաղաքի **2013** թվականի բյուջեով աղբահանության վճարների գծով նախատեսվել են **3,797.5** մլն դրամի եկամուտներ, որի ծրագրման համար կենցաղային աղբի մասով հիմք է ընդունվել **2011** թվականի մարդահամարի տվյալներից հաշվարկված ցուցանիշը, իսկ ոչ կենցաղային աղբի մասով՝ հիմնականում հասարակական և արտադրական օբյեկտների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված տվյալները: Հաշվի առնելով, որ աղբահանության վճարը գանձվում է փաստացի օգտագործվող մակերեսներից ելնելով, իրավաբանական անձանց դիմումների հիման վրա կատարվել են որոշակի գույքագրման աշխատանքներ, ինչի արդյունքում առաջացել են մակերեսների էական տարբերություններ, ինչպես նաև հաշվի են առնվել մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառման տվյալները, որը բազային տվյալների ճշգրտման արդյունքում կհանգեցնի ծրագրված եկամտային ցուցանիշից շուրջ **303,328.7** հազար դրամի նվազեցմանը, որն էլ առաջարկվել է ներկայացված նախագծով՝ համապատասխան փոփոխություն կատարելով ծախսային մասում:

- Երևան քաղաքի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնին հարակից տարածքի բարելավման, ինչպես նաև Կոմիտաս վարդապետի թանգարան–ինստիտուտին հարող տարածքի բարեկարգման նպատակով խնդիր էր առաջացրել քանդելու աշխատանքներին խոչընդոտող և զբոսայգուն ոչ հարիր հասարակական օբյեկտը: Խնդիրը լուծելու նպատակով

**16.08.2013**թ. Երևան համայնքի և «Ռիմ Գարուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվել է Խառը և Նախնական պայմանագիր, որը ստացել է նոտարական վավերացում: Ըստ պայմանագրի «Ռիմ Գարուն» ՍՊԸ-ին պատկանող ք.Երևան Արշակունյաց **28** հասցեում գտնվող /վարձակալության պայմանագիր կնքված **26.12.2000**թ. **հ.1-2370** տրված **25** տարի ժամկետով/ **2500**քմ մակերեսով Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնին հարակից տարածքը և այդ հողատարածքում գտնվող նույն կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող /սեփականության վկայական **հ. 401532**, առ **07.06.2001**թ./ **164,2** քմ մակերեսով, սննդի և սպասարկման գործունեության համար նախատեսված շինությունը փոխանակվում են Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտան Լենինգրադյան փողոցին կապող ճանապարհին կից գտնվող **3000**քմ հողատարածքի հետ, վարձակալության և գնման իրավունքի նախապատվությունը տալով «Ռիմ Գարուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

«Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՓԲԸ անկախ գնահատող ընկերության կողմից ներկայացված գնահատման արդյունքների հիման վրա պայմանագրով սահմանվել է, որ «Ռիմ Գարուն» ՍՊԸ-ն նշված պայմանագրի նպատակների ապահովման հետևանքով **205.0** մլն ՀՀ դրամի վնասի հատուցման պահանջի իրավունք է ձեռք բերում Երևան համայնքի նկատմամբ, որը վերջինս պարտավորվում է հատուցել նշված պայմանագրով նախատեսված կարգով՝ «Ռիմ Գարուն» ՍՊԸ-ի սեփականությանը հանձնելով վերոհիշյալ **3000**քմ հողատարածքը:

Երևանի քաղաքապետի **22.08.2013**թ. **հ.4177**-Ա որոշման հիման վրա, Երևան համայնքի և «Ռիմ Գարուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև **09.09.2013**թ. կնքվել է հողերի փոխանակման մասին **հ.223/2**-ԱԳ պայմանագիրը առ այն, որ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող **3000.0**քմ մակերեսով հողամասը, որը գտնվում է Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտան Լենինգրադյան փողոցին կապող ճանապարհին կից հասցեում /**6**-րդ տարածագնահատման գոտի, կադաստրային արժեքը **20,880.0** հազար ՀՀ դրամ/ փոխանակվում է «Ռիմ Գարուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալության իրավունքով պատկանող **2500**քմ մակերեսով /վարձակալության պայմանագիր թիվ **1-2370** կնքված **26.12.2000**թ. **25** տարի ժամկետով/ հողամասի հետ, որը գտնվում է Արշակունյաց պողոտայի **հ. 28** հասցեում: Հաշվի առնելով, որ վարձակալությունը ստացել է պետական գրանցում, նախագծով նախատեսվել է հողամասի կադաստրային արժեքի վճարման նպատակով որպես փոխհատուցում «Ռիմ Գարուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը



տրամադրել **20,880.0** հազ. դրամ նշված հողատարածքի սեփականության իրավունք ձեռք բերելու և փոխադարձ պարտավորությունները ամբողջությամբ կատարելու համար: Փոխհատուցումը առաջարկվում է տրամադրել Երևան քաղաքի **2013** թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի հաշվին:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է ընդունել «Երևան քաղաքի ավագանու **2012** թվականի դեկտեմբերի **25**-ի N **558**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ N 1

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 558-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N 558-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ N 2

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 558-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N 558-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում Երևանի քաղաքի 2013 թվականի բյուջեի եկամուտները և ծախսերը նվազում են **1,302,466.5** հազար դրամով:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 558-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ  
 ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տողի NN	Եկամտատեսակները	Հոլվածի NN	Ընդամենը	(հազար դրամներով)	
				այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
1	2	3	4	5	6
<b>1000</b>	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ</b>		<b>(1,302,466.5)</b>	<b>(1,302,466.5)</b>	<b>8,926,893.6</b>
	այդ թվում՝				
<b>1100</b>	<b>1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ</b>	<b>7100</b>	<b>(650,000.0)</b>	<b>(650,000.0)</b>	<b>-</b>
	այդ թվում՝				
<b>1130</b>	<b>1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ</b>	<b>7145</b>	<b>(650,000.0)</b>	<b>(650,000.0)</b>	<b>-</b>
	այդ թվում՝				
1131	Տեղական տուրքեր	71452	(650,000.0)	(650,000.0)	-
	այդ թվում՝				
1146	ժգ) Ավտոկայանատեղի համար		(650,000.0)	(650,000.0)	-
<b>1200</b>	<b>2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ</b>	<b>7300</b>	<b>8,926,893.6</b>	<b>8,926,893.6</b>	<b>-</b>
	այդ թվում՝				
<b>1250</b>	<b>2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից</b>	<b>7331</b>	<b>8,926,893.6</b>	<b>8,926,893.6</b>	<b>-</b>
	որից՝				
1254	բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ		8,926,893.6	8,926,893.6	-
	այդ թվում՝				
1256	բբ) այլ դոտացիաներ		8,926,893.6	8,926,893.6	-
<b>1300</b>	<b>3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ</b>	<b>7400</b>	<b>(9,579,360.1)</b>	<b>(9,579,360.1)</b>	<b>8,926,893.6</b>
	այդ թվում՝				
<b>1340</b>	<b>3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից</b>	<b>7421</b>	<b>(9,276,031.4)</b>	<b>(9,276,031.4)</b>	<b>-</b>
	այդ թվում՝				
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		(9,276,031.4)	(9,276,031.4)	-
<b>1350</b>	<b>3.5 Վարչական զանձումներ</b>	<b>7422</b>	<b>(303,328.7)</b>	<b>(303,328.7)</b>	<b>-</b>
	այդ թվում՝				
1351	Տեղական վճարներ		(303,328.7)	(303,328.7)	-
<b>1390</b>	<b>3.9 Այլ եկամուտներ</b>	<b>7451</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>8,926,893.6</b>
	այդ թվում՝				
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		-	-	8,926,893.6

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 558-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ  
 ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տարի NN	Բաժին	Խումբ	Գաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				<b>ԸՆԴԱՄՆԵՆ ԾԱԽՍԵՐ</b>	<b>(1,302,466.5)</b>	<b>(1,302,466.5)</b>	<b>8,926,893.6</b>
2400	04	0	0	<b>ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>789,455.2</b>	<b>(8,137,438.4)</b>	<b>8,926,893.6</b>
				այդ թվում՝			
2450	04	5	0	<b>Տրանսպորտ</b>	<b>2,046,886.2</b>	<b>(8,137,438.4)</b>	<b>10,184,324.6</b>
				որից՝			
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	5,795,381.2	(4,388,943.4)	10,184,324.6
2455	04	5	5	խողովակաշարային և այլ տրանսպորտ	(3,748,495.0)	(3,748,495.0)	-
2490	04	9	0	<b>Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)</b>	<b>(1,257,431.0)</b>	<b>-</b>	<b>(1,257,431.0)</b>
				որից՝			
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	(1,257,431.0)	-	(1,257,431.0)
2600	06	0	0	<b>ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԸՆԴՈՒՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՏՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ</b>	<b>(896,923.3)</b>	<b>(896,923.3)</b>	<b>-</b>
				այդ թվում՝			
2630	06	3	0	<b>Ջրամատակարարում</b>	<b>(896,923.3)</b>	<b>(896,923.3)</b>	<b>-</b>
				որից՝			
2631	06	3	1	Ջրամատակարարում	(896,923.3)	(896,923.3)	-
3000	10	0	0	<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>(241,669.7)</b>	<b>(241,669.7)</b>	<b>-</b>
				այդ թվում՝			
3090	10	9	0	<b>Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</b>	<b>(241,669.7)</b>	<b>(241,669.7)</b>	<b>-</b>
				որից՝			
3091	10	9	1	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	(309.9)	(309.9)	-
3092	10	9	2	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	(241,359.8)	(241,359.8)	-
3100	11	0	0	<b>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ</b>	<b>(953,328.7)</b>	<b>7,973,564.9</b>	<b>-</b>
				այդ թվում՝			
3110	11	1	0	<b>ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ</b>	<b>(953,328.7)</b>	<b>7,973,564.9</b>	<b>-</b>
				որից՝			
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	(953,328.7)	7,973,564.9	-

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 558-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ**  
**ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*(հազար դրամներով)*

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4000	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>		<b>(1,302,466.5)</b>	<b>(1,302,466.5)</b>	<b>8,926,893.6</b>
	այդ թվում՝				
4050	<b>Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ<sup>ա</sup></b>	x	<b>(10,229,360.1)</b>	<b>(1,302,466.5)</b>	-
	այդ թվում՝				
4200	<b>1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՉԵՈՔ ԲԵՐՈՒՄ</b>	x	<b>(309.9)</b>	<b>(309.9)</b>	-
	այդ թվում՝				
4210	<b>ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ</b>	x	<b>(220.2)</b>	<b>(220.2)</b>	-
	որից՝				
4212	-Էներգետիկ ծառայություններ	4212	<b>(152.9)</b>	<b>(152.9)</b>	-
4214	-Կապի ծառայություններ	4214	<b>(67.3)</b>	<b>(67.3)</b>	-
4260	<b>ՆՅՈՒԹԵՐ</b>	x	<b>(89.7)</b>	<b>(89.7)</b>	-
	որից՝				
4261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	<b>(89.7)</b>	<b>(89.7)</b>	-
4600	<b>1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ</b>	x	<b>(241,359.8)</b>	<b>(241,359.8)</b>	-
	այդ թվում՝				
4630	<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ)</b>	x	<b>(241,359.8)</b>	<b>(241,359.8)</b>	-
	որից՝				
4634	-Այլ նպաստներ բյուջեից	4729	<b>(241,359.8)</b>	<b>(241,359.8)</b>	-
4700	<b>1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ</b>	x	<b>(9,987,690.4)</b>	<b>(1,060,796.8)</b>	-
	այդ թվում՝				
4760	<b>ԱՅԼ ԾԱԽՍԵՐ</b>	x	<b>(9,034,361.7)</b>	<b>(9,034,361.7)</b>	-
	որից՝				
4761	-Այլ ծախսեր	4861	<b>(9,034,361.7)</b>	<b>(9,034,361.7)</b>	-
4770	<b>ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ</b>	x	<b>(953,328.7)</b>	<b>7,973,564.9</b>	-
	որից՝				
4771	<b>-Պահուստային միջոցներ</b>	4891	<b>(953,328.7)</b>	<b>(953,328.7)</b>	-
4772	այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ	x	-	8,926,893.6	-
5000	<b>Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ</b>	x	<b>10,184,324.6</b>	-	<b>10,184,324.6</b>
	այդ թվում՝				
5100	<b>1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ</b>	x	<b>10,184,324.6</b>	-	<b>10,184,324.6</b>
	այդ թվում՝				
5110	<b>ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	x	10,184,324.6	-	10,184,324.6
	որից՝				
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	5112	2,699,300.0	-	2,699,300.0
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	7,485,024.6	-	7,485,024.6
6000	<b>Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ</b>	x	<b>(1,257,431.0)</b>	-	<b>(1,257,431.0)</b>
	այդ թվում՝				
6400	<b>ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ՝</b>	x	<b>(1,257,431.0)</b>	-	<b>(1,257,431.0)</b>
	այդ թվում՝				
6410	<b>ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ</b>	8411	<b>(1,257,431.0)</b>	-	<b>(1,257,431.0)</b>

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 558-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տարի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>		<b>(1,302,466.5)</b>	<b>(1,302,466.5)</b>	<b>8,926,893.6</b>
2400	04	0	0	<b>ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		<b>789,455.2</b>	<b>(8,137,438.4)</b>	<b>8,926,893.6</b>
				այդ թվում՝				
2450	04	5	0	<i>Տրանսպորտ</i>		<b>2,046,886.2</b>	<b>(8,137,438.4)</b>	<b>10,184,324.6</b>
				որից՝				
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ		5,795,381.2	(4,388,943.4)	10,184,324.6
				այդ թվում՝				
				<i>8. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում</i>		<b>7,485,024.6</b>	-	<b>7,485,024.6</b>
				- Ե ենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	7,485,024.6	-	7,485,024.6
				<i>10. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</i>		<b>(4,388,943.4)</b>	<b>(4,388,943.4)</b>	-
				-Այլ ծախսեր	4861	(4,388,943.4)	(4,388,943.4)	-
				<i>12. Ավտոճանապարհի կառուցելու ներդրումային ծրագիր</i>		<b>2,699,300.0</b>	-	<b>2,699,300.0</b>
				- Ե ենքերի և շինությունների կառուցում	5112	2,699,300.0	-	2,699,300.0
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ		(3,748,495.0)	(3,748,495.0)	-
				այդ թվում՝				
				<i>4. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</i>		<b>(222,830.6)</b>	<b>(222,830.6)</b>	-
				-Այլ ծախսեր	4861	(222,830.6)	(222,830.6)	-
				<i>5. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</i>		<b>(6,890.3)</b>	<b>(6,890.3)</b>	-
				-Այլ ծախսեր	4861	(6,890.3)	(6,890.3)	-
				<i>6. Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</i>		<b>(6,606.5)</b>	<b>(6,606.5)</b>	-
				-Այլ ծախսեր	4861	(6,606.5)	(6,606.5)	-
				<i>7. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</i>		<b>(1,743,046.6)</b>	<b>(1,743,046.6)</b>	-
				-Այլ ծախսեր	4861	(1,743,046.6)	(1,743,046.6)	-
				<i>8. Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</i>		<b>(1,769,121.0)</b>	<b>(1,769,121.0)</b>	-
				-Այլ ծախսեր	4861	(1,769,121.0)	(1,769,121.0)	-
2490	04	9	0	<i>Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)</i>		<b>(1,257,431.0)</b>	-	<b>(1,257,431.0)</b>
				որից՝				

Տարի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)		(1,257,431.0)	-	(1,257,431.0)
				այդ թվում՝				
				<b>5. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր</b>		<b>(1,257,431.0)</b>	<b>-</b>	<b>(1,257,431.0)</b>
				-Հողի իրացումից մուտքեր	8411	(1,257,431.0)	-	(1,257,431.0)
2600	06	0	0	<b>ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԸԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ</b>		<b>(896,923.3)</b>	<b>(896,923.3)</b>	<b>-</b>
				այդ թվում՝				
2630	06	3	0	<b>Ջրամատակարարում</b>		<b>(896,923.3)</b>	<b>(896,923.3)</b>	<b>-</b>
				որից՝				
2631	06	3	1	Ջրամատակարարում		(896,923.3)	(896,923.3)	-
				այդ թվում՝				
				<b>1. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ցրամատակարարման և ցրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>(896,923.3)</b>	<b>(896,923.3)</b>	<b>-</b>
				-Այլ ծախսեր	4861	(896,923.3)	(896,923.3)	-
3000	10	0	0	<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>		<b>(241,669.7)</b>	<b>(241,669.7)</b>	<b>-</b>
				այդ թվում՝				
3090	10	9	0	<b>Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</b>		<b>(241,669.7)</b>	<b>(241,669.7)</b>	<b>-</b>
				որից՝				
3091	10	9	1	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		(309.9)	(309.9)	-
				այդ թվում՝				
				<b>1. Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>(309.9)</b>	<b>(309.9)</b>	<b>-</b>
				-Էներգետիկ ծառայություններ	4212	(152.9)	(152.9)	-
				-Կապի ծառայություններ	4214	(67.3)	(67.3)	-
				-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	(89.7)	(89.7)	-
3092	10	9	2	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		(241,359.8)	(241,359.8)	-
				այդ թվում՝				
				<b>1. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>(241,359.8)</b>	<b>(241,359.8)</b>	<b>-</b>
				-Այլ նպաստներ բյուջեից	4729	(241,359.8)	(241,359.8)	-
3100	11	0	0	<b>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԳԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ</b>		<b>(953,328.7)</b>	<b>7,973,564.9</b>	<b>-</b>
				այդ թվում՝				
3110	11	1	0	<b>ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ</b>		<b>(953,328.7)</b>	<b>7,973,564.9</b>	<b>-</b>
				որից՝				
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		(953,328.7)	7,973,564.9	-
				այդ թվում՝				
				-Պահուստային միջոցներ	4891	(953,328.7)	(953,328.7)	-
				-Հատկացում պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե	X	-	8,926,893.6	-

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 558-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1  
 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի N	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	N	Համիս	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
								վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9	9
				<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>			<b>(1,302,156.6)</b>	<b>(1,302,156.6)</b>	<b>8,926,893.6</b>
2400	04	0	0	<b>ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			<b>789,455.2</b>	<b>(8,137,438.4)</b>	<b>8,926,893.6</b>
				այդ թվում՝					
2450	04	5	0	<i><b>Տրանսպորտ</b></i>			<b>2,046,886.2</b>	<b>(8,137,438.4)</b>	<b>10,184,324.6</b>
				որից՝					
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ			5,795,381.2	(4,388,943.4)	10,184,324.6
				այդ թվում՝					
				<i><b>8. Մալուխների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում</b></i>			<b>7,485,024.6</b>	-	<b>7,485,024.6</b>
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113		7,485,024.6	-	7,485,024.6
				<i><b>10. Ասիական բանկի աջակցությամբ հրականագվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կալույն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b></i>			<b>(4,388,943.4)</b>	<b>(4,388,943.4)</b>	-
				-Այլ ծախսեր	4861		(4,388,943.4)	(4,388,943.4)	-
				<i><b>12. Ավտոճանապարհի կառուցելու ներդրումային ծրագիր</b></i>			<b>2,699,300.0</b>	-	<b>2,699,300.0</b>
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112		2,699,300.0	-	2,699,300.0
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ			(3,748,495.0)	(3,748,495.0)	-
				այդ թվում՝					
				<i><b>4. Վերակառուցման և զարգացման ելրոպական բանկի աջակցությամբ հրականագվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b></i>			<b>(222,830.6)</b>	<b>(222,830.6)</b>	-
				-Այլ ծախսեր	4861		(222,830.6)	(222,830.6)	-
				<i><b>5. Ելրոպական ներդրումային բանկի աջակցությամբ հրականագվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b></i>			<b>(6,890.3)</b>	<b>(6,890.3)</b>	-
				-Այլ ծախսեր	4861		(6,890.3)	(6,890.3)	-
				<i><b>6. Ելրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ հրականագվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b></i>			<b>(6,606.5)</b>	<b>(6,606.5)</b>	-
				-Այլ ծախսեր	4861		(6,606.5)	(6,606.5)	-
				<i><b>7. Ելրոպական ներդրումային բանկի աջակցությամբ հրականագվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b></i>			<b>(1,743,046.6)</b>	<b>(1,743,046.6)</b>	-
				-Այլ ծախսեր	4861		(1,743,046.6)	(1,743,046.6)	-
				<i><b>8. Ելրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ հրականագվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b></i>			<b>(1,769,121.0)</b>	<b>(1,769,121.0)</b>	-
				-Այլ ծախսեր	4861		(1,769,121.0)	(1,769,121.0)	-
2490	04	9	0	<i><b>Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)</b></i>			<b>(1,257,431.0)</b>	-	<b>(1,257,431.0)</b>
				որից՝					



Տարի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN Հոդված	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)		(1,257,431.0)	-	(1,257,431.0)
				այդ թվում՝				
				<b>5. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր</b>		<b>(1,257,431.0)</b>	-	<b>(1,257,431.0)</b>
				-Հողի իրացումից մուտքեր	8411	(1,257,431.0)	-	(1,257,431.0)
2600	06	0	0	<b>ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԸԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ</b>		<b>(896,923.3)</b>	<b>(896,923.3)</b>	-
				այդ թվում՝				
2630	06	3	0	<b>Ջրամատակարարում</b>		<b>(896,923.3)</b>	<b>(896,923.3)</b>	-
				որից՝				
2631	06	3	1	Ջրամատակարարում		(896,923.3)	(896,923.3)	-
				այդ թվում՝				
				<b>1. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությանը իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>(896,923.3)</b>	<b>(896,923.3)</b>	-
				-Այլ ծախսեր	4861	(896,923.3)	(896,923.3)	-
3000	10	0	0	<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>		<b>(241,359.8)</b>	<b>(241,359.8)</b>	-
				այդ թվում՝				
3090	10	9	0	<b>Մոցիայական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</b>		<b>(241,359.8)</b>	<b>(241,359.8)</b>	-
3092	10	9	2	Մոցիայական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		(241,359.8)	(241,359.8)	-
				այդ թվում՝				
				<b>1. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների մոցիայական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>(241,359.8)</b>	<b>(241,359.8)</b>	-
				-Այլ նպաստներ բյուջեից	4729	(241,359.8)	(241,359.8)	-
3100	11	0	0	<b>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ</b>		<b>(953,328.7)</b>	<b>7,973,564.9</b>	-
				այդ թվում՝				
3110	11	1	0	<b>ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ</b>		<b>(953,328.7)</b>	<b>7,973,564.9</b>	-
				որից՝				
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		(953,328.7)	7,973,564.9	-
				այդ թվում՝				
				-Պահուստային միջոցներ	4891	(953,328.7)	(953,328.7)	-
				-Հատկացում պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե	X	-	8,926,893.6	-

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 558-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3  
 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

Տարի NN	Բաժին	Խումբ	Գումար	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հարկած NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>		(123.5)	(123.5)	-
3000	10	0	0	<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>		(123.5)	(123.5)	-
				այդ թվում՝				
3090	10	9	0	<i>Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</i>		(123.5)	(123.5)	-
				որից՝				
3091	10	9	1	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		(123.5)	(123.5)	-
				այդ թվում՝				
				<b><u>1. Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում (պատվիրակված յազորություններ)</u></b>		<i>(123.5)</i>	<i>(123.5)</i>	-
				-Կապի ծառայություններ	4214	(47.5)	(47.5)	-
				-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	(76.0)	(76.0)	-

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 558-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 10  
 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Քյուբետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև քյուբետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>		(81.2)	(81.2)	-
3000	10	0	0	<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>		(81.2)	(81.2)	-
				այդ թվում՝				
3090	10	9	0	<i>Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</i>		(81.2)	(81.2)	-
				որից՝				
3091	10	9	1	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		(81.2)	(81.2)	-
				այդ թվում՝				
				<u>1. Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում (պատվիրակված յիսգորություններ)</u>		(81.2)	(81.2)	-
				-Էներգետիկ ծառայություններ	4212	(81.2)	(81.2)	-

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 558-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11  
 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տարի NN	Բաժին	Խումբ	Գաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ</b>		(105.2)	(105.2)	-
3000	10	0	0	<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>		(105.2)	(105.2)	-
				այդ թվում՝				
3090	10	9	0	<i>Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</i>		(105.2)	(105.2)	-
				որից՝				
3091	10	9	1	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		(105.2)	(105.2)	-
				այդ թվում՝				
				<b><u>1. Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</u></b>		<b>(105.2)</b>	<b>(105.2)</b>	<b>-</b>
				-Էներգետիկ ծառայություններ	4212	(71.7)	(71.7)	-
				-Կապի ծառայություններ	4214	(19.8)	(19.8)	-
				-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	(13.7)	(13.7)	-